«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության եւ ազգային արժեհամակարգի ձեւավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու եւ գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարինե Առաքելյան

Ուսումնական հաստատություն՝ Ազարակի Տաճատ Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……2

Գլուխ 1. Էպոսը որպես ազգային եվ մշակության արժեք……..4

1.1 Էպոսի դերը բանահյուսության մեջ, ձեվավորման պատմությունը……4

1.2 Հայ ժողովրդի Ազգային էպոսը: «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ»……..7

Գլուխ 2. Էպոսի դերը աշակերտների շրջանում հայրենասիրության եվ ազգային արժեհամակարգի ձեվավորման գործում……10

2.1 «Սասունցի Դավիթ» էպոսը որպես հայրենասիրության սերմանման աղբյուր դպրոցահասակների շրջանում……..…11

2.2 «Սասունցի Դավիթ» էպոսի դերը աշակերտների ազգային արժեհամակարգի ձեւավորման գործում……13

Եզրակացություն……17

Առաջարկներ……...……18

Օգտագործված գրականության ցանկ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն: Պայմանավորված մեր երկրում տիրող իրավիճակով՝ շարունակակնան պատերազմներով, մարդկային, տարածքային կորուստներով, տեղեկատվական անկառավարելի, ոչ ճշգրտված տեղեկատվության տարածմամբ եւ նմանատիպ այլ գործոններով առաջ եկած հուսալքության, հիասթափության հորձանուտում շատ դժավար է արթացնել, սերմանել հայրենասիրություն, ազգային արժեքներ նոր սերնդի մեջ: Կյանքը կառուցվում է նոր կանոնների եւ նոր նորմերի վրա, որտեղ ամեն պահ կա տագնապ, վախ: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհը՝ իր արժեքային համակարգով, բավականին բարդ ու անկանխատեսելի է թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել եւ բյուրեղացնել այն արժեքները, որոնք անհրաժեշտ են ուժեղ քաղաքացի պատրաստելու համար:

Ազգային բանահյուսությանն անդրադառնալով ուսուցիչը հնարավորություն է ստանում աշակերտին եւս մեկ անգամ հաղորդակից դարձնել հայրենասիրության, ազգային առժեքների հետ, քանի որ առասպելներում, էպոսում, հեքիաթներում եւ ավանդազրույցներում, ինքնաբուխ ձեւով դրսեւորվում են տվյալ ազգի ինքնության, աշխարհատեսության, հոգեկերտվածքի եւ վարքագծի գծերը, երկարատեւ հարմարումների հետեւանքով ձեւավորված արժեքային մոտեցումներն ու դիրքորոշումները: Դրանք լավագույնս արտացոլում են Աստծո, բնության, հասարակության, մարդու, կյանքի, ազգի, հայրենիքի, պետության եւ այլ արժեքների ու երեւույթների վերաբերյալ տվյալ ժողովրդի պատկերացումները: Այլ խոսքով՝ էպիկական կերպարների, հատկապես հերոս-դյուցազունների սխրագործությունների, վարք ու բարքի վերլուծությունն անսպառ նյութ կարող է տալ ոչ միայն նրանց, այլեւ տվյալ ազգի մտածելակերպն ու գործելակերպը, բարոյահոգեբանական յուրահատկությունները որոշ իմաստով հասկանալու ու գնահատելու համար: Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է ազգային դաստիարակության նոր, բազմազան ուղիների ու միջոցների մշակման անհրաժեշտությամբ, որը պետք է իրականացվի հայկական ժողովրդական էպոսի՝

«Սասունցի Դավթի» ուսումնասիրման գործընթացում հայ երեխայի ազգային ինքնության ընկալման ու ձեւավորման միջոցով։

Հետազոտության նպատակն է բացահայտել «Սասունցի Դավթ» էպոսի դերը դպրոցահասակ երեխաների մոտ հայրենասիրության եւ ազգային արժեքների ձեւավորման գործում։

Վերոնշված նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետեւյալ **խնդիրները՝**

- Հետազոտել էպոսի, մասնավորապես, «Սասունցի Դավիթ» էպոսի դերն ու նշանակությունը մշակութային, գրական ժառանգության մեջ
- Վեր հանել «Սասունցի Դավիթ» էպոսի դերը աշակերտների շրջանում հայրենասիրության սերմանման գործընթացում
- Ուսումնասիրել հայոց ազգային էպոսի ազդեցությունը դպրոցականների ազգային արժեհամակարգի ձեւավորման մեջ։

Աշխատանքը **կառուցված է** տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, գլուխներից, ենթագլուխներից, եզրակացությունից, առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից։

ԳԼՈՒԽ 1. ԷՊՈՍԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔ

Ազգային էպոսներն ամեն ժողովրդի երազանքներն արտահայտող գրական հուշարձաններ են, որոնք ուղեկցում են ազգի հետագա ընթացքին՝ հիշեցնելով, թե ինչ է դնում հայրենիք սրբազան հասկացության մեջ տվյալ ժողովուրդը:

Ըստ օտարազգի էպոսագետների՝ «Սասունցի Դավիթը» աշխարհի լավագույն էպոսներից մեկն է, իսկ ըստ ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի, որը 1964-ին թարգմանել ու հրատարակել է էպոսը ֆրանսերենով, իր խաղաղասիրական ու դեմոկրատական գաղափարախոսությամբ հայկական ազգային էպոսն անզուգական է[1]:

1.1 Էպոսի դերը բանահյուսության մեջ, ձեւավորման պատմությունը

Բանահյուսությունն անփոխարինելի տեղ ունի դպրոցական ուսուցման համակարգում: Բանահյուսական նյութերը՝ էպոսներ, հեքիաթներ, առասպելներ, առակներ, դյուցազներգություն, ժողովրդական խաղիկներ, հայրեններ, հանելուկներ, առած-ասացվածքներ, ցրված են գրեթե բոլոր դասարանների դպրոցական դասագրքերում: Դրանց մեջ արտացոլված են տվյալ ժողովրդի ազգային բնաբուխ յուրահատկությունները: Սովորողները միշտ էլ սիրով են կարդում այդ նյութերը:

Բանահյուսության ճանաչողական նշանակությունը հիմնականում դրսեւորվում է նրանով, որ այն արտացոլում է իրական կյանքի երեւույթների առանձնահատկությունները եւ տալիս է լայն գիտելիքներ սոցիալական հարաբերությունների պատմության, աշխատանքի եւ կյանքի մասին, ինչպես նաեւ պատկերացում աշխարհայացքի եւ հոգեբանության մասին: Ժողովուրդը, երկրի բնույթի մասին:

Բանահյուսության ճանաչողական նշանակությունը մեծանում է նրանով, որ նրա ստեղծագործությունների սյուժեներն ու պատկերները սովորաբար պարունակում են լայն տիպավորում, պարունակում են կյանքի երեւույթների եւ մարդկանց կերպարների ընդհանրացումներ: Բանահյուսության ստեղծագործություններում ոչ միայն

[1] Տե՛ս Գ: Մարդյան «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» էպոսի համահավաք բնագիրը եվ Հովսեփ Օրբելին, Երեւան, 2019, էջ 7

ներկայացված են կյանքի, պատմության իրադարձություններ եւ հերոսների կերպարներ, այլեւ բացատրվում են:

Բանահյուսությունը հմտորեն օգտագործում է գեղարվեստական, ֆանտաստիկ, ինչպես նաեւ սիմվոլիզմ, այսինքն. երեւույթների այլաբանական փոխանցումս ու բնութագրերը եւ դրանց բանաստեղծականացումը: Ժողովրդի գեղարվեստական ճաշակն արտահայտված է բանահյուսության մեջ: Նրա ստեղծագործությունների ձեւը դարեր շարունակ հղկվել է հրաշալի վարպետների աշխատանքով: Ուստի բանահյուսությունը զարգացնում է գեղագիտական զգացողություն, գեղեցկության զգացում, ձեւի, ռիթմի եւ լեզվի զգացում: Այդ իսկ պատճառով այն մեծ նշանակություն ունի մասնագիտական արվեստի բոլոր տեսակների զարգացման համար՝ գրականություն, երաժշտություն, թատրոն:

Բանահյուսության մեջ իր ուրույն եւ կարեւոր դերն ունի **էպոսը** (հին հունարեն՝ έπος «խոսք», «ասք», «պատմություն»). Այն գործածվում է երկու իմաստով՝

1. Լայն առումով գրական երեք սեռերից մեկը (էպիկական, քնարական, դրամատիկական),

2. նեղ ժանրային առումով ժողովրդական հերոսական կամ ավանդական վեպ, վիպական բանահյուսության ծավալուն եւ բարդ տեսակ, որը բաղադրվում է վիպական ու պատմահերոսական երկերից, ավանդություններից, զրույցներից[2]:

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանաստեղծության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որեւէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին, դա կարող է վերաբերել նաեւ ինքնուրույնության կամ անկախության ձգտող որեւէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի: Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման եւ զարգացման պատմությունը. կամ պատմության մի մասը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարեւորագույն դրվագները եւ այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը:

Ազգային էպոսները մեծ դեր ունեն ազգի, դրա որպես մեկ միասնականության ձեւավորման գործում: Միջին դարերում համարվում էր, որ Հոմերոսի Իլիականը

[2] Տե՛ս ՀՍ հանրագիտարան հատոր 4, Ե. 1978

հիմված է պատմական փաստացի իրադարձությունների վրա, եւ որ Տրոյական պատերազմը պետք է դիտվի որպես Եվրոպական միապետների ծագումնաբանության պատմական հիմնավորում[3]:

Ազգային էպոսները շատ են աշխարհում՝ «Բեովուլֆ», «Նիբելունգների երգը» (գերմանական), «Լեգենդ Շառլեմանի մասին» «Երգ Ռոլանդի մասին» (ֆրանսիական), «Գիլգամեշ» եւ այլն: Դրանցից վերջինը «Գիլգամեշ»-ը շումերաաքքադական էպոս է եւ համարվում է աշխարհի ամենահին պահպանված գրավոր տեքստը:

Էպոսները շատ տարբեր են եւ հաճախ արտահայտում են տվյալ ազգի պատմությունը, որը ընկալվում է որպես ճշմարտություն: Օրինակ՝ հունական էպոսները: Ոդիսական ստեղծվել է, հավանաբար, մ.թ.ա. VIII դարում: «Ոդիսականի» սյուժեն ոչ թե հերոսական է, այլ հեքիաթային, արկածային եւ կենցաղային: Պատմում է Իթակե կղզու արքա Ոդիսեւսի Տրոյական պատերազմից հետո տուն վերադառնալու ճանապարհին տասը տարի տեւած արկածների, ինչպես նաեւ Իթակեում Օդիսեւսին սպասող հավատարիմ կնոջը՝ Պենելոպեն բաժին ընկած փորձությունների մասին: «Ոդիսականը» նույնպես բաժանված է 24 գրքերի կամ երգերի: Կառուցվածքի առումով «Իլիականի» համեմատ «Ոդիսականն» ավելի բարդ է: Պոեմս սկսվում է պատմության կեսից, իսկ նախորդող իրադարձությունների մասին տեղեկանում ենք կենտրոնական երգերից: Գլխավոր հերոսն ավելի վառ է արտահայտված:

Տրոյա քաղաք-պետության արքայազն Ալեքսանդրը առեւանգում է հունական Սպարտա պետության թագավոր Մենելայոսի կնոջը՝ Հեղինեին: Հեղինեն Զեւսի դուստրն էր եւ ուներ առասպելական գեղեցկություն: Հեղինեի առեւանգումը դառնում է Տրոյական պատերազմի պատճառ:

Այս էպոսների շարքը կարելի է շարունակել եւ առանձին վերլուծել որպես տվյալ ազգի որակների արտահայտման «ուղեցույց»: Սույն աշխատանքում մենք կանդրադառնանք մեր ազգային էպոսի՝ վեր հանելու վերջինի ազդեցությունը աշակերտների մոտ հայրենասիրության ու ազգային արժեհամակարգի ձեւավորման գործում:

[3] Տե՛ս Paul Cohen, "In search of the Trojan Origins of French", in *Fantasies of Troy, Classical Tales and the Social Imaginary in Medieval and Early Modern Europe*, Alan Shepard, Stephen David Powell eds., published by the Centre for Reformation and Renaissance Studies, 2004, p. 65

1.2 Հայ ժողովրդի Ազգային էպոսը: «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ»

«Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ», հայ ժողովրդի ազգային էպոս կամ դյուցազնավեպ, որը ստեղծվել է ժողովրդական բանահյուսության հիման վրա: Վիպասացների եւ բանահավաքների կողմից այն կոչվել է նաեւ «Սասնա փահլեւաններ», «Սասնա տուն», «Ջոջանց տուն», «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Դավիթ եւ Մհեր», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» եւ այլն: Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն ժողովրդի ազատության եւ անկախության, հայրենիքի եւ պետականության պահպանման: Հայոց դյուցազնավեպը գաղափարական առումով արտացոլում է նաեւ իրականությունից ունեցած դժգոհությունն ու կառուցվելիք արդար աշխարհի նկատմամբ ունեցած փափագը՝ բոլոր դեպքերում գովաբանելով օտարի լծի դեմ ելած ժողովրդի հերոսական պայքարը:

«Սասնա ծռեր» էպոսը կառուցվածքային առումով կազմված է վիպական չորս մասերից կամ ճյուղերից, որոնցից յուրաքանչյուրը կոչվել է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով՝ «Սանասար եւ Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»: Հերոսների այս չորս սերունդը միմյանց հետ կապված են ազգակցական կապերով: «Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպելական դյուցազունների սխրանքներով եւ հայ ժողովրդի՝ իր ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ մղած դարավոր պայքարով: Էպոսի ստեղծման հստակ թվականը մեզ հայտնի չէ, քանի որ վերջինս գալիս է ժամանակի խորքից եւ ունի պատմական խոր ակունքներ: Էպոսի ասացողները էպոսը պատմել են հայկական տարբեր բարբառներով, մեծ մասամբ մոկաց, մշո, սասնա, ինչպես նաեւ արարատյան:

Հայոց ազգային էպոսը փոխանցվել է բանասացների եւ վիպասացների միջոցով՝ տարբեր պատումների ձեւով: Ինչպես, օրինակ՝ տարոնցի երեսփոխան Կրպոյից Գարեգին Սրվանձտյանը գրի է առել եւ այնուհետեւ 1874 թ-ին հրատարակել «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով էպոսի պատումներից մեկը: Բանագետն իրավացիորեն նշում է, որ «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին ճյուղն իր արմատներով ձգվում է դեպի նախաքրիստոնեական ժամանակները եւ արձագանքն է Աստվածաշնչի Հին կտակարանում զետեղված այն փաստի, թե Ասորեստանի

Սենեքերիմ թագավորի որդիները՝ Ադրամելեքն ու Սանասարը, սրով սպանում են իրեց հորը եւ փախչում Արարատի երկիրը:4 Գ. Սրվանձտյանցը վկայում է, որ Աստվածաշնչի այդ դեպքը նույնությամբ պատմում են եւ՛ Մովսես Խորենացին, եւ՛ Թովմա Արծրունին[4]: Այնուհետեւ մոկացի Նախո Քեռի-ից 1889թ-ին Մանուկ Աբեղյանը գրի է առնում մեկ այլ տարբերակ եւ հրատարակում «Դավիթ եւ Միհր» վերնագրով:

1939 թ-ին՝ վիպերգի ստեղծման 1000-ամյակի առթիվ, 60 պատումների հիման վրա կազմվել է միասնական, համահավաք բնագիր (հեղինակներ՝ Մանուկ Աբեղյան, Գեւորգ Աբով, Արամ Ղանալանյան), որն ամբողջական եւ հստակ պատկերացում է տալիս

Էպոսում գործում են վիպական հերոսների չորս հիմական սերունդ, որոնք միմյանց հետ կապված են ազգակցական կապերով: «Սասնա ծռերը» բաղկացած է վիպական 4 մասից կամ ճյուղից, որոնցից յուրաքանչյուրը կոչվում է հերոսների մեկ սերնդի անունով՝ «Սանասար եւ Բաղդասար», «Մեծ Միհր», «Սասունցի Դավիթ» եւ «Փոքր Միհր»:

Էպոսի առաջին հերոսները Սանասարն ու Բաղդասարն էին, նրանք հայոց Գագիկ թագավորի աղջկա՝ Ծովինարի զավակներն էին: Ծովինարը հայրենի հողը լքելուց առաջ մեկ լիքը բուռ եւ մեկ կիսատ բուռ ջուր էր խմել Կաթնաղբյուրից: Լիքը բռից ծնվում է խոշորակազմ եւ ուժեղ Սանասարը, իսկ կիսատ բռից՝ փոքրակազմ Բաղդասարը: Այնուհետեւ մեծանալով եւ հզորանալով եղբայրները կռվում են խալիֆայի զորքի դեմ, հաղթում նրան եւ փախչելով Բաղդատի խալիֆի իշխանությունից՝ գալիս են հայրենի Սասունում բերդ կառուցում, հզորացնում եւ շենացնում այն:

Սանասարին հաջորդում է իր որդիներից ամենաքաջը՝ Միհրը: Մեծ Միհրին նաեւ ասում էին Առյուծաձեւ Միհր, քանի որ գոտեմարտել էր հսկա առյուծի հետ, որը փակել էր հացի ճանապարհը, եւ մեջտեղից երկու կես արել: Վիպասացները նկարագրում էին, որ ինչպես նժույգին հեծած Սանասարը «մեկ սար էր սարի վրա», այնպես էլ նրա որդի Միհրը «խոջա ամրոց էր նստած ձիու վրա»: Միհրը նաեւ մենամարտում հաղթում է Մըսրա Մելիքին եւ Սասունն ազատում հարկերից:

Տարիներ հետո, երբ Մելիքը մեռնում է, նրա կինը՝ Իսմիլ Խաթունը Միհրին խնդրում է, որ գա եւ տիրություն անի իր երկրին: Սակայն Իսմիլ Խաթունը խորամանկությամբ եւ արբեցնելով կարողանում է 7 տարի Միհրին պահել Մըսրրում եւ մի արու զավակ

[4] Գ. Մարդանյան, «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» էպոսի ուսուցման մի քանի խնդիրներ, Երեւան-2015, էջ 4

ունենալ նրանից, որին իր ամուսնու անունով անվանում է Մելիք: Հասկանալով իր սխալը՝ Միերը նորից վերադառնում է Սասուն եւ նորից շենացնում այն: Որոշ ժամանակ անց ծնվում է Դավիթը, որին տուն բերելուն պես, Միերն ու կինը մահանում են:

Սասնա ծռերի առաքինությունները կատարելության են հասցված Դավթի կերպարում, որին ժողովուրդը դարձրել է իր էպոսի առանցքային կերպարը: Էպոսում հենց Դավիթի կերպարի միջոցով են արտահայտվել հայ ժողովրդի վեհ գաղափարները, խոր հույզերն ու բոլոր նվիրական իղձերը: Հենց Դավիթն էր, ով կռվելով կրտսեր Մըսրա Մելիքի հսկայական զորքի դեմ, սրի մեկ հարվածով սպանում է նրան եւ Սասունն ազատում է հարկերից եւ արաբների իշխանությունից: Դավիթն ունենում է մեկ որդի՝ Փոքր Միերը, որին մահից առաջ անիծում է, քանի որ մենամարտի էր բռնվել իր հետ՝ չիմանալով որ իր հայրն է:

Դավիթը Միերին անիծում է, որ անմահ լինի եւ անժառանգ: Փոխարինելով հորը՝ Փոքր Միերը քաջաբար պատերազմում է Դավիթի թշնամիների հետ եւ լուծում հոր վրեժը: Եվ իհարկե, կատարվում է հոր տված անեծքը եւ «Սասնա ծռեր»-ի վերջին հերոսն, այդպես էլ անժառանգ ծերանալով, փակվում է Ագռավաքարում եւ պատգամում.

Եվ այսպես էլ Փոքր Միերը, անժառանգ մնալով, ավարտում է հայկական հերոսավեպը: Էպոսում գլխավոր հերոսների կողքին տեսնում ենք ժողովրդի իմաստությունը մարմնավորող Քեռի Թորոսին, Ձենով Օհանին, արտատեր պառավին, արաբ ծերունուն եւ այլ տարեց մարդկանց, որոնք իրենց խրատներով օգնում են Սասնա քաջերին:

Էպոսում նկարագրվող պատմական իրադարձությունները տեղի են ունենում արաբական տիրապետության ժամանակ, եւ նկարագրվում է սասունցիների պայքարն արաբ նվաճողների դեմ: Որոշ պատմական իրադարձություններ ու հերոսների անուններ համընկնում են: Սակայն պետք է նշել, որ հայկական էպոսի արմատները հասնում են հազարամյակների խորքը, երբ մարդն ուներ ամենապարզունակ ապրելակերպը: Այն իր մեջ խտացնում է պատմության տարբեր ժամանակահատվածներ ու մշակութային շերտեր:

«Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսի դերը մեշ է ինչպես գրականության, պատմության այնպես էլ արվեսլի վեջ: Հայկական մշակույթում բազմաթիվ ստեղծագործություններ են նվիրված ազգային էպոսին:

«Սասնա ծռեր» էպոսն ընդգրկված է Հայաստանի ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում:[5] Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության կոնվենցիայի Միջկառավարական կոմիտեի 7-րդ նստաշրջանը 2012 թվականի դեկտեմբերի 5-ին «Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ էպոսի կատարողական դրսեւորումները» հայտն ընդգրկել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

ԳԼՈՒԽ 2. ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Սասունցի Դավիթ» էպոսը, իր վրա կրելով հայկական վերածնության դրոշմը, հայ ժողովրդի ողջ պատմության ընթացքում ստեղծված բարոյական համամարդկային արժեքների ամփոփումն ու զետեղարանն է: Նրանում մարմնացած բարոյական հայցքները արտացոլում են հասարակական այն ռեալ հարաբերությունները, որոնցում ապրել է ինքզ՝ ժողովուրդը: Էպոսը աշխատավոր գյուղացիության՝ ընդդեմ արտաքին եւ ներքին կեղեքողների մղած պայքարի ընդհանրացումն է, ժողովրդի բարոյական սկզբունքների կտակարանը[6]:

---

[5] Տես «Հայաստանի Հանրապետության կառավարություն 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշում «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները եւ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատելու մասին», Հավելված N2»

[6] Տես Զ. Ղազարյան, Բարոյական սկզբունքները «Սասունցի Դավիթ» էպոսում, «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան- 1976, էջ 7-8

2.1«Սասունցի Դավիթ» էպոսը որպես հայրենասիրության սերմանման աղբյուր դպրոցահասակների շրջանում

«Հայրենասիրությունը կարելի է ձեւակերպել որպես հասարակական կյանքի եւ պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարեւորագույն հոգեւոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը եւ դրսեւորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ հայրենիքի բարօրության»; Հայրենասիրական դաստիարակությունը, հանդիսանալով անձի համակողմանի զարգացման կարեւորագույն հատկանիշներից մեկը, հայրենիքի նկատմամբ աստիճանական եւ անընդհատ իրագործվող սիրո եւ հարգանքի դրսեւորումն է: Այն ընդունակ է անձի մեջ ձեւավորել այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են սերը եւ հարգանքը հարազատ քաղաքի, ժողովրդի, ընտանիքի, հայրենիքի պատմության արժանի էջերի նկատմամբ եւ վերջապես ձգտումը՝ տեսնել հայրենիքը ծաղկուն եւ բարգավաճ:

Հայրենասիրություն հասկացությունը օրգանական կապի մեջ է տվյալ երկրի պատմության հետ, քանի որ հայրենիքը միայն արդի ժամանակաշրջանի երկիրը չէ, այլ նրա ողջ պատմությունը, նրա մշակույթի, հոգեւոր կայացման ընթացքն է, անցյալը, ներկան, ինչպես նաեւ ապագան:Բանահյուսությունն անփոխարինելի տեղ ունի դպրոցական ուսուցման համակարգում: Բանահյուսական նյութերը՝ էպոսներ, հեքիաթներ, առասպելներ, առակներ, դյուցազներգություն, ժողովրդական խաղիկներ, հայրեններ, հանելուկներ, առած-ասացվածքներ, ցրված են գրեթե բոլոր դասարանների դպրոցական դասագրքերում: Դրանց մեջ արտացոլված են տվյալ ժողովրդի ազգային բնաբուխ յուրահատկությունները: Սովորողները միշտ էլ սիրով են կարդում այդ նյութերը:

Կարող ենք ասել, որ հայրենասիրության հիմքերի դաստիարակությունն ընդգրկում է խնդիրների ավելի լայն շրջանակ, այն է՝ դա միայն սեփական տան, ընտանիքի, մանկապարտեզի, քաղաքի (գյուղի) հանդեպ սիրո դաստիարակությունը չէ: Այլ հայրենի բնությունը, ժողովրդի մշակութային ժառանգությունը, սեփական ազգը եւ այլ ազգերի ներկայացուցիչների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը, բայց նաեւ հարգալից վերաբերմունքի դաստիարակումը աշխատող մարդու եւ նրա

աշխատանքի արդյունքների, հայրենի հողի, հայրենիքի պաշտպանների նկատմամբ. պետական խորհրդանիշներ, պետական ավանդույթներ եւ տոներ։ Այս բոլոր առաջադրանքները կարեւոր եւ արդիական են, անհնար է հրաժարվել դրանցից որեւէ մեկի լուծումից։

Էպոսի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն է, որն իր գեղարվեստական մարմնավորումն է գտել Սասնա դյուցազունների չորս սերունդների կերպարներում։ Սասնա դյուցազունները, իրենց մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ, միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների, ցանկությունների եւ երազանքների մարմնավորումն են եւ բնու-թագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ։ Սանասարն ու Բաղդասարը, հիմնադրելով Սասնա բերդը, ապահովում են ժողովրդի անվտանգությունն ու քրտնաթոր աշխատանքի անձեռնմխելիությունը։ Նրանք, ինչպես նաեւ նրանց հետնորդները, իրենց գերմարդկային ուժն օգտագործում են ոչ թե սեփական փառք ու իշխանություն ձեռք բերելու նպատակով, այլ ի սպաս են դնում ժողովրդի բարօրությանն ու ազատ կյանքին։ Բնութագրական է, որ Սանասարն ու Բաղդասարը առաջին հերթին Սասուն եկած աղքատների համար են տներ կառուցում, հետո՝ իրենց համար ամրոց։ Մեծ Մհերը երկար ժամանակ սասունցիներին պահում է որսով։ Դեւերին սպանելուց հետո Դավիթը նրանց հափշտակած ոսկին բաժանում է ժողովրդին, ինքը բավարարվում միայն մի ձիով։ Իսկ երբ հայրենիքի վրա կախվում է արտաքին վտանգը, նրանք առանց հապաղման դուրս են գալիս այն վերացնելու վճռականությամբ։ Ժողովրդասիրության ու հայրենասիրության փայլուն օրինակ է տալիս Առյուծաձեւ Մհերը։ Իմանալով, որ երդմնազանց լինելու դեպքում ինքն ու կինը պետք է մահանան, նա դիմում է այդ քայլին, որպեսզի իրենից հետո Սա-սունն անտեր ու անպաշտպան չմնա։

Աստված թող մեկ տըղա տա մեզ,

Էրթա Մելիքի օձիք բռնի,

Թող չը հանգչի Սասնա ճրագ,

Աստըծու զառ գել չի ուտի։

Որ մենք կանք մեր աշխըրքին-տի մեռնենք.

Համա որ մենք մեռնենք,

Մեր տղա մեր տեղ սաղ ըլի՝

Մենք էլ սաղ տի հիշվենք:

Մեր տան անուն չի կորսվի,-

այս խոր համոզմունքով է Միերը դիմում անձնազոհության:

Օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարը, սակայն, իր ամբողջական ու փայլուն արտահայտությունն է գտել էպոսի երրորդ ճյուղում՝ Սասունցի Դավթի կերպարի միջոցով: Մսրա Մելիքն ամեն ինչ անում է Սասնա ճրագը մարելու, Սասունը հափշտակելու համար: Բայց միշտ էլ նրա դեմ դուրս է գալիս ժողովրդի սիրելի զավակը՝ Դավիթը, խափանում օտար բռնակալի բոլոր դիտավորությունները: Ժողովուրդը աշխատավորի արդար զայրույթով ու սպանիչ ծաղրով է ներկայացնում բռնակալ Մելիքին ու նրա կամակատարներին, իսկ սիրելի հերոսի սխրագործությունները պատկերելիս ազատություն է տալիս իր երեւակայությանը, հիպերբոլիկ պատկերներով պանծացնում նրան: Մանուկ Դավիթը չի անցնում բռնակալի թրի տակով: Փորձում են զոռով տանել, բայց ճկույթը դիպչում է քարին, եւ քարից կրակ է ելնում: Դավիթը այնպես է կոտը խփում հարկահան Կոզբադնի գլխին, որ կոտի փշրանքները մինչեւ օրս էլ թռչում են: Եվ, վերջապես, Դավիթը մի զարկով կտրում է քառասուն ջրաղացքար, քառասուն գոմեշի կաշի, Մելիքին կիսում երկու հավասար մասի եւ այնպես կիսում, որ Մելիքը զարկի ուժգնությունից չի զգում իր կիսվելը: Ավելին: Եթե հրեշտակը իր թեւը դեմ չառներ Դավթի թրին, ապա կպատռվեր նաեւ դժոխքի սեւ ջուրը, եւ երկիրը կկործանվեր: Նվաճողի ու բռնակալի նկատմամբ այսպիսի հետեւողական վճռականություն կարող է ցուցաբերել միայն այն ժողովրդի երեւակայությունը, որը հազարամյակներ շարունակ անհավասար մաքառումների մեջ է եղել սեփական գոյության իրավունքը հաստատելու համար:

2.2 «Սասունցի Դավիթ» էպոսի դերը աշակերտների ազգային արժեհամակարգի ձեւավորման գործում

Արժեքները գենետիկ չեն փոխանցվում, դրանք ձեւավորվում են կյանքի փորձի արդյունքում, եւ այդ փորձի դաշտը ապահովելը մեծահասակների պարտականությունն է:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ

արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգեւոր, իմացական, մշակութային եւ էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձեւավորման եւ զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որեւէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է եւ համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաեւ զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձեւավորման եւ նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարեւոր եւ անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձեւավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի եւ գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի եւ օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Դպրոցահասակների արժեքային կողմնորոշումների ուսումնասիրության արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է հասարակության ձեւավորման եւ զարգացման խնդիրներով, ավանդույթների պահպանման եւ վարքագծի նորմատիվ կանոնների վերարտադրման անհրաժեշտությամբ: Այս հարցի հետազոտությունը կարեւոր է հասարակության համար, քանի որ ցույց է տալիս նրանց շրջանում տեղի ունեցող սոցիալական, մշակութային փոփոխությունները: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձեւավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձեւավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների եւ կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական եւ այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս եւ այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձեւավորումը

սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ եւ այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին եւ ձեւավորվում իբրեւ ստեղծագործական անհատականություն:

Բոլորս կարեւորում ենք արժեքների ձեւավորումը գալիք սերնդի մոտ եւ միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատում են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Դպրոցում բոլոր առարկաներն իրենց ներդրումն ունեն երեխայի արժեհամակարգի ձեւավորման գործընթացում:

Աշակերտների շրջանում ազգային արժեհամակրգի ձեւավորման գործում անփոխարինելի է էպոսի դերը; Էպոսի յուրաքանչյուր հերոս ունի առանցքային նշանակություն : Էպոսում ներկայացված է մի շարք պատմական դրվագներ, որոնց միջոցով հոգատարություն է ցույց տրվում հայրենիքի նկատմամբ, դրանցից է Սասուն քաղաքի հիմնադրման պատմությունը

Հալվոր նայեց դարգահի վերա,

Էդոր վերին հարկեր տեսավ,

Քարեր հանած էդա բարձր հարկեր,

Տեսավ քարափներ պատ շարած,

Զարմացած մնաց, հարցուց, ասաց. — Էդո՞ր անուն դնեմ:

Աստված ձեր տուն շինի,

Ես ի՞նչ անուն դնեմ էս տան: Աստված բարի տա ձեզ,

Դուք ինչքա՞ն ուժ ունիք,

Որ վեր հաներ եք էս մե՛ծ-մեծ քարեր:

Վա՛, էս ի՞նչ սասան քարեր են[7].

Էպոսի գաղափարական եւ դաստիարակչական նշանակությունը կայանում է նրանում, որ նրա լավագույն ստեղծագործությունները ներշնչված են առաջադեմ վեհ գաղափարներով, հայրենիքի հանդեպ սիրով, խաղաղության ձգտմամբ: Էպոսը

[7] Տե՛ս Սասունցի Դավիթ, Երեւան, 2012, 388 էջ

հերոսներին ներկայացնում է որպես հայրենիքի պաշտպան եւ հպարտության զգացում է առաջացնում նրանց մոտ:

Էպոսում առանցքային է հայ կնոջ կերպարը, ով խելացի է, գրագետ, համարձակ, լիարժեք անձ, իսկ ամուսնանալուց հետո՝ տղամարդու ընկերը եւ խորհրդատուն: Միջնադարում, նաեւ դրանից շատ ավելի վաղ կերտել կնոջ այսպիսի կերպար վկայում է հայ ժողովրդի իմաստնության եւ ազատամիտ հայացքների մասին: Ցանկացել ենք աշակերտի մեջ ձեւավորվել հպարտության զգացում իր նախնիների ապրած կյանքի համար:

Ընդգծել ենք շատ կարեւոր մի հանգամանք. ժողովրդական այս ծավալուն ստեղծագործությունը ազատագրական պայքարի պատմություն է. հայ դյուցազունները, լինելով հզոր մարդիկ, իրենց ֆիզիկական ուժը երբեք չեն օգտագործում նվաճողական նպատակների համար. նրանք խաղաղ կյանքի մարդիկ են: Էպոսում սերմանում է անկախության եւ խաղաղության կարեւորությունը:

Շատ կարեւոր է, որ հենց դպրոցից երեխան կարողանա պատկերացնել, թե որոնք են իր արմատները, ովքեր են իր նախնիները, ինչպիսի ճանապարհ են անցել նրանք եւ ինչ պարտականություն են դրել իր վրա: Ազգային մտածելակերպի ձեւավորման պահանջը դեռեւս 5-րդ դարում արծարծել է պատմահայրը, եւ մինչեւ այսօր այն պահպանում է իր հրատապությունն ու կարեւորությունը: Այսօր այդ պահանջը մեկ անգամ եւս ամրագրում է առարկայական չափորոշիչը: Եվ ո՞ր ստեղծագործությունը, եթե ոչ մեր էպոսը, կարող է լավագույնս լուծել այդ խնդիրը: Անհրաժեշտ է, որ աշակերտը ոչ միայն կարդա էպոսը՝ որպես ուսումնական նյութ, այլեւ ընկալի այն որպես ամենահայկական գիրք, որպես մտածելակերպի ամենահայերեն դրսեւորում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ազգային էպոսները մեծ դեր ունեն ազգի, դրա որպես մեկ միասնականության ձեւավորման գործում: Աշխարհի գրեթե բոլոր ազգերը, որոնք անցել են «ազգի» ձեւավորման ճանապարհը, այդ ճանապարհին ստեղծել են իրենց էպոսը՝ դրա միջոցով արտահայտելով իրենց ազգին բնորոշ լավագույն գծերը:
- «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական եւ դաստիարակչական նշանակությունը կայանում է նրանում, որ նրա լավագույն ստեղծագործությունները ներշնչված են առաջադեմ վեհ գաղափարներով, հայրենիքի հանդեպ սիրով, խաղաղության ձգտմամբ: Էպոսը հերոսներին ներկայացնում է որպես հայրենիքի պաշտպան եւ հպարտության զգացում է առաջացնում նրանց մոտ:
- Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձեւավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձեւավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների եւ կարողությունների:
- Ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձեւավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ եւ այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին եւ ձեւավորվում իբրեւ ստեղծագործական անհատականություն:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

I. Տարբեր առարկաների շրջանակներում, մասնավորապես «համաշխարհային պատմություն», «գրականություն» առարկաների շրջանակներում ուսումնասիրել տարբեր ազգերի էպոսները եւ դրանք կապել տվյալ ազգի պատմության, մշակույթի հետ:

II. Աշակերտներին հանձնարարել «Սասունցի Դավիթ» էպոսի կերպարների, նրանց կատարած քայլերի վերլուծություն, կազմակերպել բանավեճեր այդ թեմայի շուրջ:

III. Դպրոցներում կազմակերպել միջոցառումներ, որոնց շրջանակներում աշակերտները հնարավորություն կստանան ազատ արտահայտել իրենց պատկերացումները «հայրենասիրություն», «ազգային արժեքներ» հասկացությունների շուրջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

I. Paul Cohen, "In search of the Trojan Origins of French", in Fantasies of Troy, Classical Tales and the Social Imaginary in Medieval and Early Modern Europe, Alan Shepard, Stephen David Powell eds., published by the Centre for Reformation and Renaissance Studies, 2004,

II. Գ. Մարդյան «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» էպոսի համահավաք բնագիրը եվ Հովսեփ Օրբելին, Երեւան, 2019

III. Գ. Մարդանյան, «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» էպոսի ուսուցման մի քանի խնդիրներ, Երեւան-2015

IV. Զ. Ղազարյան, Բարոյական սկզբունքները «Սասունցի Դավիթ» էպոսում, «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան- 1976

V. ՀՍ հանրագիտարան հատոր 4, Ե. 1978

VI. Սասունցի Դավիթ, Երեւան,

VII. «Հայաստանի Հանրապետության կառավարություն 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշում «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները եւ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատելու մասին», Հավելված N2»